


ՊԱՅՄԱՆՔ

ՊԵՏԱԿԱՆ
Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու քիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տոյար
Վեցամսեայ 1.50 "
ԿԱՆԻԿ

Ծրարացման տոհմը
20 ամսեայով



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄՆՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵԻ ՇԱԲԱԹ

Her. Pere G. Kalemkarian Martians
Lengasce No. 4
Vienne

ՀԱՍՏԵ

"Iravounk"

VARNA (Bulgarie)


Редакция

на ВѢСТНИКЪ

"Иравункъ"

ВАРНА

Փրոպիւնը ետ
յեւ տրոպիւր



Վառնայի Հնչակեան Մասնա-
ճիւղս խորին ցաւով ու կոկծահար
կուգայ հայ հասարակութեան
գուժել եղբայրասպան ձեռքերու
զոհ գացող իր երկու հայրենա-
նուէր և թանկագին ընկերնե-
րու

ՇԱՀԷՆ — ՄԻՈՅՐ

ԵԻ

ԳԱՐԵԳԻՆ ԶԻԹՃԵԱՆԻ

Եղբրական մահերը, և յայտա-
բարել թէ Հայրենիքին նուիրուած
այս երկու զոհերուն անմոռանալի
յիշատակը յարգելու համար
հանգիստուոր Հոգեհանգիստ պիտի
կատարուի վաղը, կիրակէ, քա-
ղաքիս Ս. Սարգիս Եկեղեցւոյն
մէջ, և յիտ աւարտման արարողու-
թեան ատենախօսութիւններ պի-
տի ըլլան:

Ուստի կը հրաւիրուի վառնայի
հայ հասարակութիւնը իրեն
բազմութեամբ մասնակցելու այդ
սուգի արտայայտութիւն, որով
անգամ մըն ալ ցոյց տուած պիտի
ըլլայ իր խորին համակրութիւնը
դէպի այդ հայրենանուէր և անձ-
նուրաց զինուորները:

Հնչակ. Մասնաձ.

ՄԱԿԵՂՈՆԻԱ

Աթէնքէ Էօփօքէն կարեւոր շարա-
թաթերթին զրկուած թղթակցութիւն
մը Մակեղոնիոյ Յոյն և Պուլկար Ժո-
ղովուզներու մասին հետեւեալ ու-
շագրուած տեղեկութիւնները կը հա-
ղորդէ:

Թղթակցից նախ յոյն և պուլկար
վարժարաններու մասին խօսելով,
կըսէ թէ իր տուած տեղեկութիւնները
Յունաց Պատրիարքարանի եւ պուլ-
կարաց Էքսարքարանի պաշտօնական
վաւերաթուղթերէն քաղած է:

«Մակեղոնիոյ մէջ Պուլկարներու եւ
Յոյներու բազմամարդութեան տեսա-
կէտով համեմատական թիւը որոշելու
համար առնենք, կըսէ, էն շատ
խնդրոյ նիւթ եղող երեք նահանգնե-
րու պուլկար և յոյն վարժարանները:

1) Մանասթըր նահանգին մէջ Յոյ-
ները ունին 447 վարժարաններ, 633
ուսուցիչներով եւ 25,157 աշակերտ-
ներով: Պուլկարները ունին 273 վար-
ժարաններ 424 վարժապետներով եւ
9,804 աշակերտներ քննութեան ա-
ւան (տարեշրջանի սկիզբին առնեց
թիւը 15,161 բարձրացած կըլլայ):

2) Սէլւսի նահանգին մէջ Յոյ-
ները ունին 521 վարժարաններ, 787
ուսուցիչներով եւ 32,534 աշակերտ-
ներով: Պուլկարները ունին 319
վարժարաններ, 493 վարժապետներով
եւ 9544 աշակերտներով (տարւոյն
սկիզբին 14,856 արձանագրուողներու
փոխարէն):

3) Անդրիանուպոլսոյ (Էստրնէ)ի
նահանգին մէջ Յոյները ունին 416
վարժարաններ, 787 վարժապետնե-
րով եւ 31,216 աշակերտներով: Պուլ-
կարները ունին 162 վարժարաններ,
226 վարժապետներով եւ 4,661 աշա-
կերտներով (8,127 արձանագրուածնե-
րուն փոխարէն):

Նամակագիրը այս թուանշանները
ցոյց տալով (որոնք չենք պիտի որ աւ-
տիճան ճիշտ են) կըսէ, «Այս թիւերը
որոշ պայայտներ են Յունաց բազմա-
մարդութեան. այդ բազմեջեայ վաւե-
րաթուղթը զրկուած է եւրոպական
բոլոր պետութեանց: Անոր կարեւո-
րութիւնը անտեսելի դժուար է կար-
ծեմ: Ուստի Մակեղոնիոյ քրիստոնե-
աներուն մեծամասնութիւնը ինք-
զինքնին յոյն կը դաւանեն: Միայն
օտար հրապարակագիրներ են որ թե-
թեւամտութեամբ եւ կողմնակցու-
թեամբ Մակեղոնիոյն սլաւ ցոյց կու-
տան:

«Եթայնի կերպով ճշմարտութեան
այս ուրացումին դէմ է որ Յոյները
ազդեօրէն կը բողոքեն յանուն ար-
դարութեան եւ ճշմարտութեան»:

Նամակագիրը կը սկսի շատ կծու

չեղանքով յարձակիլ պուլկար յեղա-
փոխականներուն վրայ որոնք իբրեւ
թէ նոր Արեւելեան Ռումէլի մը ստեղ-
ծել կողմն են եղեր, յառաջիկային
աս ալ Պուլկարիոյ հետ միացնելու հա-
մար, եւ իրենց այս ձգտումին հակա-
ռակող երեւելի Հէլլէնները կը տան-
ջեն ու կ'ապանեն եղեր: Ազատու-
թեան այդ ինքնակոչ արայեաններուն
գործած վայրագութիւնները եւ ոճի-
րները պատճառ եղեր են որ Յունա-
տան եւ Ռումանիա թուրքիոյ մերձե-
կան: Կը յաւելու նաեւ թէ Պուլ-
կարներու փաստարանները այդ աւա-
ղակները (?) դիւցազուններ կը հռչա-
կեն եւ այլն:

Նամակագիրն այս լիբր լեզուն
ցոյց կուտայ թէ Բանդէլլէնիդի մոլե-
ռանդ աշակերտ մըն է ինք, որ բնաւ
չը ներքին իսկ Արեւելեան Ռումէ-
լիի պուլկարացումին:

Եթէ իր ըսածին նման Մակեղո-
նիոյ քրիստոնեաներուն մեծամասնու-
թիւնը Յոյներէ կը բաղկանայ, ասոնք
ալ ինչ պատճառ ունին, այդ երկրին
ինքնավարութիւն (օթոնոմի) տալու
ծրագրին հակառակելու: Ինքնավար
երկիր մը իր բնիկ ժողովուրդէն կը
կառավարուի: Հետեւաբար հոն, եթէ
Յոյները մեծամասնութիւն կը կազմեն,
կ'առավարուի իրեն ուժն ալ մեծաւ մա-
սամբ իրենց ձեռքին մէջ պիտի գըտ-
նուի:

Հոս կը տեսնուի թէ, Յոյներու
Փանաթիզմը այն աստիճան յառաջ
գացած է որ, կը նախընտրեն թուրքին
տիրապետութեան տակ միւս քան թէ
իրենց Պուլկար կրօնակիցներուն հա-
մահաւասար իրաւունքներով Մակե-
ղոնիոյն կառավարել: Իրենց այս
ընթացքը սա խորամանկութեան հե-
տեւանք է որ, թուրքէն լուծին տակ
տարիներու ընթացքին մէջ իրենք յա-
ջողին Պուլկար տարրը ճնշումներով
յուշացնել ու ապագային Մակեղոնիոյն
հէլլէնացած ցոյց տալ, եւ այսպէսով
Բանդէլլէնիդի երազը իրականացած
տեսնել: Ինքօրի: . . :

ՔԱՀԱՆԱՅ ԿՈՒԶՈՒԻ

Պապատաղի (Ռումանիա) եկե-
ղեցւոյն քահանայ հիւանդացած
ու վերջնականապէս հրաժարած
ըլլալով. տեղւոյն թաղ. խոր-
հուղը քահանայի մը պետքը կը
ծանուցանէ, պայմանաւ որ այդ
քահանան ընտանիքի տէր ըլլայ:

Ամսականի և ուրիշ պայմաննե-
րու մասին մանրամասն տեղեկու-
թիւն ստանալու համար փափաքողը
պէտք է դիմէ Պապատաղի թաղ.
խորհուրդին:

Գ. ԶԻԹՃԵԱՆԻ ՍՊԱՆՍԱՆ
ՊԵՊԻՔ

Տփղիսի Նոր-Գարր Օտեսայի
ուսու թերթերէն քաղելով ԶԻԹ.
ճեանի սպանման դէպքը հետեւեալ
կերպով կը պատմէ:

Օրուայ Ժ. 12 1/2-ին Շիջեան մե-
ռիկ պէս գունատած գնում էր իւր
երեք հայրենակիցներին հետ Լանթերո-
նովսկայա փողոցի անկիւնից դէպի
Եկատերինի-Կոկայա փողոցը: Շիջեանի
ուղեկիցները իրիտ գողտուած էին:
Ուսմբը հասաւ Դերիբասովսկայա եւ
Եկատերինի-Կոկայա փողոցների ան-
կիւնը, որանդ սալայատակի վրայ
կանգնած էր մի ոստիկան: Երբ օտա-
րականները մայթից իջան սալայատակը
նրանից մէկը, որ սպիտակ բաճկոն
ուէր, բռնեց Շիջեանի ձեռքն եւ
ստաց «ասա»: Շիջեանը կամացուկ
ինչ որ բացատրեց իւր ուղեկիցներին:
Նրա բացատրութիւնը, ըստ երեւոյթի
չգոհացրին բնկերներին, որովհետեւ
նրանց դէմքերն աւելի կատաղի ար-
տայայտութիւն ստացած: Սպիտակ
բաճկով ունեցողը պիտի բռնեց Շիջ-
եանին: Վերջինս գուրս պրծաւ նրա
ձեռքից եւ սկսեց հեռանալ: Օտարա-
կանները նայեցին երար երեսի, ըս-
պիտակ բաճկոն ունեցողը ինչ որ
փնթփնթած, արագորէն հասաւ Շիջ-
եանի ետեւից եւ, բաճկոնի տակից
հանելով մի երկար դաշոյն, խրեց նրա
մարմնի մէջ: Շիջեանը սարսափելի
ճիչ արձակեց եւ վար ընկաւ: արեւ-
նաթաթաւ: Ահագին թնուով ամբոխ
հաւաքուեց նրա շուրջը, սակայն ա-
մենքն ալ այն աստիճան չփոթուել
էին, որ ոչ ոք չկարողացաւ մար-
դասպանին եւ նրա ընկերներին բռնել
եւ թող չտալ, որ նրանք հարուածներ
հասցնեն Շիջեանին, Առաջին անգամ
ուշքի եկան մի սպայ եւ փողոցում
կանգնած ոստիկանը, որոնք վրայ
վաղեցին մարդասպանին: Վերջինս
դաշոյնն ուղղեց սպային, սակայն
սպան կարողացաւ բռնել նրա ձեռքից:
Մարդասպանը կատաղի դիմադրու-
թիւն ցոյց տուեց եւ զուրս պրծաւ
սպայի ձեռքից, բայց յետոյ նրան
բռնեց ոստիկանը: Իսկ մարդասպանի
գործակիցները փորձեցին փախիլ:
Բայց նրանց էլ բռնեցին: Ամբոխը
յարձակուեց մարդասպանի վրայ եւ
ուզում էր նրա դատաստանը կտրել
Լիւնչի օրէնքով: պրիստաին մեծ
գժուարութեամբ աջողուեց մարդաս-
պանին ազատել կատաղի ամբոխի ձեռ-
քից եւ բազմաթիւ ոստիկաններով
չըմապատուած ուղարկել ոստիկանա-
տուն:

Այստեղ հարցուփորձից երեւաց, որ

նա թրքահայաստան հայ է հաշատուր Յակոբեան Մեչադանեան ազգանունով իսկ նրա ընկերներն ազգանուններն են՝ մէկինը — Սահակ Սիմէոնեան, միւսինը — Յարութեան Պետրոսեան, որոնք նոյնպէս թրքահայեր են :

Նրանք ռուսներէն ջարդուած լեզուով բացատրեցին, որ Օդեսոս չին եկել ինչեղից, որտեղ աշխատում էին օրավարձով : Երկուսն էլ նրանք ինչ որ դրամական հաշիւներ են ունեցել : Նրանց ասելով, հանգուցեալն ի չարն էր գործ գնել իրենց վտապառնելու եւ իրացրել էր իրեն յանձնուած դրամական մի գումարը : (2)

Սազունի-Արզումանեանց «Կենդանութիւն»ին հնարած 20,000 տոլարի առասպելն է որ կը կրկնուի ոճրագործներու բերնին մէջ : Մինչդեռ Ձիթճեանի ընտանիքը չոր հաց կաղաղակէ :

ՁԻՆԵԱՆ ԻԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Պետութեանց սպառազինութիւններուն օրըստօրէ աճելու մասին շատ բաներ գրուած են ցարդ : Վերջին անգամ Պրոնսապի երեսփոխան Մ. Մէսիմի Ռըլիտէ տէ յընդհանրապէս մէջ հրատարակած մէկ աւագրաւ յօդուածով որոշ բողոքատուութիւններ կընէ շուրջ 30 տարիէ ի վեր սպառազինութեանց աճումի մասին ու կըսէ .

«Բոլոր ազգերը ցոյց կուտան որ շատ կը փափաքեն խաղաղութեան : Սակայն իրողութիւն է թէ հետզհետէ զինուորական բռնու աւելի կը ծանրանայ . այս իրողութիւնը որչափ որ ալ շատ պարզուած լինի, չէ կարելի չը կրկնել ժիշտ և առանց վերապահումի, այն յոյսով որ լոյսը վերջապէս պիտի կրնայ ժողովուրդներու

մտքին մէջ թափանցել, որոնք հնազանդութեամբ, առանց բողոքի եւ առանց տրտուելի կը տանին օրքան զօր աճող անպէտ եւ անտեղի ծախքերուն այդ ծանր շեշտը :

«Սա 30 տարուան շրջանէն առանց դուրս ելնելու, կը հաստատուի թէ 1876 ին, Պրոնսապ-Գիրման պատերազմէն հինգ տարի յետոյ, Եւրոպայի պատերազմական ծախքերը (ծովային եւ ցամաքային) 3 ու կէս միլիար էր : Տասը տարի վերջ 1886 ին, մէկ միլիար աւելցաւ :

«Այդ տուեանէն ի վեր Եւրոպան ահի մէջ է, ամէն տարի գալնան պատերազմի ծախքերու կրակածով : 1886 ի շուրս ու կէս միլիար շարունակական ծախքը վեց միլիարի բարձրացաւ 1897 ին, և առանց հաշուելու թրոսնապի պատերազմին ծախքը, 1902 ին 8 միլիարը անցաւ : և միեւնոյն ատեն Եւրոպայի մէջ զէնքի տակ գտնուող զինուորացի թիւը 500,000 աւելցաւ : այսինքն 2600000ը 3,100000 ի բարձրացաւ :

«Ի մասնաւորի Պրոնսապի համար զինուորական ծախքը ջախջախիչ է : Պրոնսապի իր շարս բանակներուն մէջ 740,000 զինուոր կը պահէ, որոնց 650,000ը Պրոնսապիներն են : Այսպիսի մէջ միայն Ռուսիան է որ մէկմէկ շատ աւելի, 90 միլիոն, բնակիչ ունի մեզմէ աւելի զինուոր կը պահէ, միւս բոլոր պետութիւնները նուազ զինուոր ունին դրօշմաւ տակ :»

Մ. Մէսիմի բաւական տանք կրկնէ հաշիւներով ու բողոքատուութիւններով կ'առաջարկէ որ Պրոնսապի դրօշակի տակ 400,000 զինուորէ աւելի չը պահէ : Այս

երեսփոխանը փրոնսապի բանակին վերաբերութեան համար պատրաստած իր այդ ծրագիրը ի մօտոյ խորհրդարանին ներկայացնել կուզէ :

ՆԱՅ ԵՆԻՉԵՐԻՆԵՐԸ

Սարգսս...

Ճշմարտութիւնը երեւան հանելու համար խնդրեմ հետեւեալ երկտողիս մի անկին շնորհել Խաչատուրի համարներէն մէկուն :

Մօտ օրերս պատահամբ ձեռքս անցաւ Շարժումի 509 համարը, ուր ինչ որ Սարգսսեանցի Յուլի գրագրատութիւններով ու ստեղծութիւններով ի իւր գրութիւնով դուրս է գալիս իբր թէ հերքելու ՆՈՐ-ԴԱՐԻ մէջ լոյս տեսած (և մասամբ «Իրաւունք»ի մէջ արտատպւած) իմ Սարգսսեանցի Ենիշէրիներին համար լոյս տեսած յօդուածներին մասին գրած թղթակցութիւնները :

Դուք պ. Յուլի Կովկասի հայ մամուլի մէջ Ենիշէրիներին մասին լոյս տեսած յօդուածներին մասին խօսելով ասում էք . «Միայն պ. Հրայր յօդուածը, «Նոր-Դար»ում լոյս տեսած ու «Իրաւունք»ում արտատպւած, վերջերս այստեղ մեծ յուզում ու արդար զայրոյթ առաջացրեց... Երեսի ձեռք եւ ձեռք նմանների շրջանում, որովհետեւ տեղացի ժողովւորդը ընդհակառակը շատ գոհ եւ ուրախ է լինում, երբ իր գործադրութեան ու կրօն բռնութիւնների նկարագրութիւնն է տեսնում մամուլի էջերում : Պարզ է որ Դուք ասում էք եւ որոշ նպատակով, որին հասնելու համար է որ անմիջապէս աւելացնում էք «նախ որ յօդուածագիրը յայտնի էր իբրեւ մի ամենակեղտոտ անձնաւորութիւն եւ ապա՝ յօդուածը լինէր էր չինծու եւ թագրական ու ամբողջաբան փաստերով եւ ողորմելի եղբակցութիւններով» Ենիշէրիական այդ մտնովը մեղ համար միանգամայն «հանալի է :

Այդպիսի ստոր միջոցով դուք ուզում էք հակադրեցութիւն առաջ բերել, որ ինչ խօսքով թուացնել մեր գրածների առաջ բերած ազդեցութիւնը ու ճշող տպաւորութիւնը : Այդ աշխարհ է, որ վնասեւ նախ որ դուք չը գիտէք թէ ով է իսկական Հրայրը, այլ կասկածում էք մի ուրիշին, հետեւապէս ամենակեղտոտ անձնաւորութիւն լինելը ամենաստոր ու չար սրտից բղիւսած մի պարզ զրպարտութիւն է, որոնք յատուկ են միայն Ենիշէրիների սրտացաւ պաշտպան Յուլիներին : Իսկ գալով իմ յօդուածի «չինծու փաստերով» լինելը լինելուն, կասե՛ք որ մոնք պատահած դէպքերը նկարագրել ենք ամենաճշգրիտ ու անկողմնակալ կերպով, այլապէս ի՞նչու քաջութիւնը չէք ունենում «փաստերէն» հերքել իմ «չինծու» (??) ասածները : Բայց դուք լաւ հասկացել էք որ այդպիսի մի բայ առնելով ձեռք ձեռք ձեռք ձեռք ձեռք մէջ կը գնէիք, որովհետեւ այդ բոլոր դէպքերը կատարել են աշխարհայ, Սարգսսեանի 10-15 հազար հայ ժողովուրդի աչքի առաջ եւ մինչեւ այժմ չը դառնեց մէկը որ դուրս գար հերքելու այդ մասին «ոռոսահայ պարբերական թերթերում լոյս տեսած մի շարք յօդուածները» :

Իսկ քերական վրայ ձեռք ունեցած կասկածը արդեօք ձեռքերի չէք գտնում : Ձեռք որ բոլոր Հաֆթլանցուցուց, ինչպէս նաեւ ուրիշ գիւղացու ծանօթ են այդ գողութեան համար (??) եկած քրդերի (??) ովքեր լինելը : Դուք առանց քաշելու եւ ամաչելու Փայաջուկի զէպի առթիւ գրում էք որ «Հնչակեան կուս. մարդիկ երկուսեան զէպ յարձակւում են եղբ. Մ. Ենիշէրի վրայ եւ երկու եղբոր վերաբերում եւ այն» ու չարախոսութեամբ աւելապիտան «այդպիսի մի մեծ եղբայրագործութեան մասին Հրայրը պապանցել է մինչեւ այժմ, որովհետեւ կուսակցութիւն կայ մէջտեղ» : Նախ որ դուք Պ. Յուլի զէպին աւելի էք բողոքովին այլ կերպարանք, ապա՝ զիտակցաբար ու չար զիտաւորութեամբ անգիտանում էք եւ ուրանում զէպից անմիջապէս յետոյ «Նոր-Դար» մէջ (N18) լոյս տեսած մեր թղթը :

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

(89)

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ը

ՄԱՍՆ ԵՐՐԱՐԴ

ՎՈՏԱՐԱՆԻ ԼԱՅՆԸ

— «Բայց ես Ձեր Բարձրութեան դիմած եմ որ միջամտելու շնորհքն ընէիք մեզի, պարոն հիւպատոս :

— «Աղէ՛կ, եթէ ստա՞յրկուած պայմանն ընդունուի :

— «Ատ պայմանը Ձեր կառավարութեան կողմէն կառա՞յարկուի :

— «Ո՛չ, թուրք կառավարութեան կողմէն :

— «Ձեր Մեծութեանը կառա՞յարկուի :

— «Այո՛ :

— «Ո՛չ, ըսել է թէ՛ թուրք կառավարութիւնը նախապէս ստուած է ձեզի հայ ժողովուրդեան կողմէ եղած աղերսագրի մը կամ դիմումներու պատասխանն, այնպէս չէ՞ :

— «Ստիկա ձեզի վերաբերեալ խնդիր մը չէ՛... միայն թէ՛ ընդունելու էք որ կոտորածը անխուսափելի է եւ թէ միջամտութիւնը կրնայ ըլլալ մեր կողմէն, եթէ յիշափոխականներու անունները մէ-

կիկ մէկիկ գրուին ու անոնք կառավարութեանը յանձնուին :

— «Պարոն հիւպատոս... երեսակայեցէք թէ այդ առաջարկութիւնը դուք ընելու չէիք հայ եկեղեցականի մը, որ սիրով եւ կատարեալ վստահութեամբ իր ոտքը կը դնէ Ձեր սեմերէն ներսը : Երբ ատիկա կարելի ըլլար, ի՞նչ պատճառ ունէի հոս գալու :

— «Ուրիշ ո՞ւր պիտի երթայիք :

— «Ուղղակի՛ վալի փաշայի ապարանքը :

— «Հոն չի պիտի երթայիք, որովհետեւ խղուած է ձեր մէջ ամեն յարաբերութիւն :

— «Այդ է վերջնական միջոցը :

— «Այո է... :

Վանական դուրսը ծնած՝ վերադարձեր էր Առօրեայ մանկեայ վարժներու քով եւ յայտնի էր թէ հիւպատոսը կառավարութեան գաղտնի գործակալն էր : Գերագոյն Մարմինը ստիպուեցաւ խորհրդակցութիւններ կատարել :

— Է՛հ, եղբայրներ՛, յայտարարեց Մկրտիչ Աւիտիսեան, մենք յոյսերս չի պիտի դնենք Եւրոպացի հիւպատոսներու վրայ : Անոնք Գրիտոնիէական կրօնքի մը կեղծ դիմակը դրած մէջմէկ լրտեսներ են քաղքին մէջ : Անոնք աւելի վստահաւոր են մեզի համար, աւելի կասկածելի են հայ ժողովուրդի դժգոյսին չին Սուլթանի ոճրագործները... : Ստիկա երբ որ անգամն է որ դիմում կըլլայ Անգլիոյ մարդասէր կառավարութեան հիւպատոսին : Այդ հրէշը նախ մեր եկեղեցւոյ հիմերը քանդելու աշխատեցաւ, առարկելով որ «կրօնական ծէսերու տարբերութիւնը

հետեւ կը պահէր հայ ժողովուրդը Անգլիոյ Ազգին ազդեցութենէն» : յետոյ ամեն ջանք թափեց յեղափոխականները գտնել ու զանոնք թուրք կառավարութեան յանձնել : Միեւնոյն հրէշային դերը կատարել ուզեց ֆրանսական հիւպատոսը :

— Ճշմարիտ է, վրայ բերաւ Ներսէս Արծրունի, որուն կերպարանքը խռովալոյզ մըրկի մը նմանեալ : Երկուսուած ծովու մը կը նմանէր : Մեր յոյսը չի պիտի դնենք այդ հրէշներու վրայ, որովհետեւ համոզուած ենք թէ՛ թուրք կառավարութիւնը դժուած ծրագիր մը ունի իւր ձեռքը՝ անոնց խորհրդակցութեամբ : Հայր սուրբին եղած առաջարկութիւնը բացարձակ ապացոյց մըն է իրենց նմանակի դաւադրութեանց զոր անխղճօրէն սկսած են իզոթ գնել : Հիմակ մտածենք... ահա՛՝ քաղաքը սպառնաւոր դեղացիները բոլորովին երեսի վրայ մնացած են : Պարոնս երկրորդ ամիսն ալ կանցնի, բայց անոնք չեն համարձակիր քայլ մը հետանալու : Կառավարութիւնը կը ստիպէ որ քաղքէն դուրս ելնեն... : Դարձեալ չեն ընդունել : Այդ պատճառով քաղաքը կը լեցուին ամեն օր : Միւս կողմէն լրտեսական քուրտիւր խուճի լուծի քաղաքը կուգան... :

— Մեզի կը մնայ քաղաքը սպառնաւոր դեղացիներուն ալ զէնք առնել որ գտնէ՛՝ անձերնին պաշտպանեն, ընդհատեցին Դրոշակեան ու Հնչակեան ներկայացուցիչները միաբերան :

— Ի հարկէ՛, յարեց Վանական :

Ու միանային հաւանութիւնով որոշեցին գաղտնաբար զինել զեղացիները, որչա՛փ որ կրնային :

թակցութիւնը, ուր մենք մանրամասն կերպով նկարագրել ենք այդ գէպը եւ պատահական չորսն առիթ տողներին:

Դրանից պարզ է որ մենք մեր յօդուածները գրելիս չենք առաջնորդուել կուսակցական նկատմաներով, այլ իբրեւ իւր կոչումը ըմբռնող թղթակից, աշխատել ենք ներկայացնել իրերը իրենց ճշգրիտ գոյներով: Մեզ շատ դարձացնում է նոյնպէս ձերայն տարօրինակ վարմունքը, որով դուք երկուքի բառը անպատճառ Դաշնակցական էք ուզում հասկանալ: Մենք երբեք տեղի ունեցած ռաբաբործութիւնները չենք վերագրել Դաշնակցականներին, այլ այն մի կարգ թափափուկներին, որոնք տիրող հանգամանքներին օգտուելով անպատճառ հագործում են կուսակցական անուններ եւ յեղափոխականի դիմակի տակ անթիւ չարքներ են հասցնում ժողովուրդին, որից ստիպուած վերջինս այդպիսիների ճակտին եւնիշիտի անունը գրողաց: Եթէ դուք Պ. Յոլակ կամովին կոյր ձեռնալով չէք ուզում ճանաչել զրանց գոյութիւնը, գոնէ գիտեցէք «Դրօշակ»-ին որը իւր անցեալ տարուա վերջին համարներէց միւսում պաշտօնապէս հաստատում էր ենիշիտիների գոյութիւնը թէ այստեղ Սալմաստում եւ թէ այլ ուր: Իսկ գալով ձեր լայն պոստալստութեան ու երախայական ինքնախաբեյութեանը, որով դուք մի առանձին պարծանքով գրում էք Դաշնակցութեան «փառաւոր գործունէութեան», ծաւալումի, յաջողութեան եւ նրա բարձր դիրքի եւ միւս կուս. ժողովուրդին աչքում ընկած լինելու մասին, որից ստիպուած վերջինները անգագար յարձակումներ են գործում Դաշնակցութեան դէմ: Կ'ստանք միայն որ այդ բանում Պ. Յոլակ ձեր հիւանդոտ երեւակայութիւնը գերազանցում է նոյնիսկ անմահ Դոն-Գիշտին:

Հրայր

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՎԱՌՆԱՅԻ ՈՐԲԱՆԱՄԻՆ



Ընկերութեանս—է. րորդը ընդհ. ժողովը որ պիտի գումարուէր Յունիս 15ին մեծամասնութիւնը ներկայ չըլլալով յետագուեցաւ յառաջիկայ կիւրակէ 22 Յունիս կէս օրէն վերջ ժամ 2ին Ազգ. վարժարանի սրահին մէջ:

ՕՐԱԿԱՐԳՆ Է

Ա. Գործ. ժողովոյ վեցամսեայ համարադրութիւն:

Բ. Գանձապետի ընտրութիւն: Ուստի, ըստ տրամադրութեան կանոնադրի Թ. րորդ յօդուածին, այս երկրորդ հրաւերին ներկայ եղող անդամներ մեծամասնութիւն կը նշանակուին եւ բացակայ եղողներ իրաւունք չ'պիտի ունենան ժողովոյն որոշման գործողութիւններ ընելու:

Մնաւք Յարգանք

Ի դիմաց Ընդհ. ժողովոյ գիւնարի Ատենադպիր Ատենապետ Արշաւ Փափազեան Կ. Գէորգեան (Կնիք)

17 Յունիս 1903

Վառնա

ԱԶԳԱՅԻՆ

ՍԻՆԻՍՏՐԵԻ Թաղ. Խորհուրդը Պատրիարքարանէ խնդրած ըլլալով որ Տ. Արեւտակէս քան. Յէսկեանը պահուի տեղւոյն մէջ, հակառակ իր Գէօթէնճէ երթալու փափաքին, Կրօն. ժողովը որոշած է որ յիշեալ քահանայն Սինիստրէի մէջ պաշտօնավարէ, եւ այս մասին պիտի յայտարարուի գիրք գրուելու Պապի Պատր. փոխանորդ Ս. Հօր:

ԳԵՕՍԹԵՆՃԵԻ Թաղ. Խորհուրդը Պատրիարքարանէ խնդրած էր տեղւոյն Տ. Յակոբ քահանային հետադուր. այս խնդրանքին հակառակ թախանձող ուրիշ գրեւ ալ Պատրիարքարան հասած ըլլալով խնդրոյն քննութիւնը

յանձնուած էր Կրօն. ժողովոյ ատենապետ սրբազանին: Սա իր տեղեկագիրը արդէն ներկայացուցած ըլլալով, Կրօն. ժողովը որոշեց Տ. Յակոբ քահանայն վերահաստատել Գէօթէնճէ իր պաշտօնին մէջ:

Թաղ. Խորհրդոյ այս պարտութիւնը մի գուցէ իր հրաժարին պատճառ ըլլայ:

ՊԱՍՐԱՅԻ մէջ հայ եկեղեցի մը հիմնելու եւ օծելու համար Պաղատաթաղ. Խորհրդոյ խնդրանքին վրայ Պատրիարքարանը արտօնութիւն տուած է Տ. Համազաստ քահանային:

ԱՆՁՆԱՍՊԱՆ եղող Տ. Առաքել Ծատուրեան 115,000 ռուպլի կտակել է իր աղբակներուն, իր գիւղացիներուն եւ բարեգործական նպատակի համար: Իսկ 7200 ռուպլի Սանասարեան վարժարանին: Այդ կտակներէն զատ, 17 նամակներ թողել է ծրարներուն մէջ փակուած թղթատարական մարմաներով կնքուած: Այդ նամակները աղբուած են Վհհ. Կաթողիկոսին, Տ. Կարապետ Եղեանցի, Ժամահարեան եղբարց, Ա. Մանթաշեանի եւ ուրիշներուն:

Կ. ՊԱՆՈՅ Կեդր. վարժարանը Ղալաթիայէն Բէրա փոխադրելու խնդիր մը կը յուղուի դարձեալ: Այս անգամ 3000 ոսկիի նուէրը այդ խնդիրը մէջ տեղ բերաւ, կուղէն այս 3000-ին վրայ 7000 ալ աւելցնելու 10000 ոսկիով նոր վարժարան մը եւ յարակից կալուածներ շինել Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէկ զետեւին վրայ:

Այս ծրագիրին հակառակողներ ալ կան, որոնց առարկութիւնը եւս բանաւոր կը թուի:

ԷՋՄԻՍՄԱՅ մէջ մեծ հանդիսաւորութեամբ կատարուել է 1600 ամեակի տօնը, նախագահութեամբ Վհհ. Կաթողիկոսին: Իրիկունը Էջմիածնայ տաճարին գաւթին եւ Գէորգեան ձեռնարանին մէջ լուսավարութիւններ կատարուել են:

Թրքահայաստանի երեք հայեր՝ Մուրադ Պետրոսեան, Կարապետ Եւսեպեան եւ Մինաս (Սակահունը

չէ իշուած) Ռուսիայէ անցած էին Թուրքիա իրենց հայրենիքը երթալու համար: Թուրք զինուորներ, Գալա լրագրի գրածին համեմատ, զանոնք բռնելով ետ դարձնելու ոտին սպաննած են Մի. նասը եւ Մուրադ Պետրոսեանը: Այս օճիրը իմացուած է ուսս սահմանապահ զինուորներէն:

ՏՓՂԻՍԻ աղջկանց Ժմնադիւսոս տարուան 49 շրջանաւարտներէն 22ը հայ օրիորդներ են եղեր:

ԲԱԹՈՒՄԻՅ «Նով. Օբ.»-ին հաղորդում են, որ այնտեղ երկիւղալի լուրեր են ստացուած Թրքահայաստանից, գըլխաւորապէս Մուշի եւ Դիարբեքիւրի վիլայեթներին: Այդ լուրերը գաղթական Հայերին մեծ վիշտ են պատճառում եւ յուսահատութեան դուռն են ձգ. գումար Աւսպէս, այս օրերս այդ գաղթականներին մէկն ուղեցել է Թոկով հեղձամահ անել իրեն, բայց ժամանակին կարողացել են աղատեն նրան: Նա պատմել է թէ Դիարբեքիւրի մի նամակ է ստացել իւր կնոջից, որը գրում է, թէ քիւրդերը հի՛ ձի ժամանակ սպանել են իւր երկու եղբորը: Այս դժբաղդութիւնը յուսահատեցրել էր նրան եւ նա վճռել էր անձնասպանութեամբ վերջ դնել իւր կեանքին: Նոր-Դար

Ամերիկայէ Յունիս 17 թիւով մեկ կը գրեն:

«Տակաւին Միւսի սուգը չվերջացած, ահա Ձիթեանի սպանման սոսկալի լուրը հասաւ հեռագրով: Սակայն ինչ որ ալ ըլլայ հետեւանքը նազարէկի ձագերն են որ ըրին կամ ընել տուին, եւ այսօր Ամերիկայի մէջ ամբողջ հայութիւնը կը սգայ Ձիթեանի համար, ի բաց առեալ մէկ քանի Սապահգիրեանի հետեւողները: Այնչափ սաստիկ է ցարստեղի հայերուն որ, եթէ զսպողներ չըլլան, Սապահգիրը

ՍԵՆՎԻՐ...

Սմարտեանի գեղեցիկ գրչեր մըն էր:

Լուսինը բարձրացած էր պայծառ երկնակամարին վրայ՝ ցանցնելով իր օժգոյն ճառագայթները չորս գլին: Նստղերը կը պլպլային: Խոր լուսթիւն մը կը տրեւէր Վանայ քաղքին ամեն արուարձաններու մէջ:

Բայց այդ պահուն մէկը կար որ անքուն կը հորկէր... մէկը կար որ ժամերը կը համբէր մէկիկ մէկիկ... մէկը կար, որուն աչքերը բոց մը կը վառէին, իսկ հոգին վրէժով մը կը լեցուէր...

Ատիկա Սէլվին էր:

Ապարանքին պարտէզը շինուած վրանի մշ ներքեւ կը գտնուէր ան, որուն քով պառկած էր հազարապետը:

Սէլվին քնացուցած էր ատ հրէշը... իսկ ինքը նստած էր անկողնին մէջ: Ինկած էր հազարապետին դիմացը վրայ: Սէլվին կը նայէր... կը դիտէր անոր ճակտին կնճիւղներն, որոնք սեւ օձի մը պէս կը գալարուէին կարծիս: Կը դիտէր անոր շրթունքները ծածկող զարշափալ երեւոյթը, որ հոգւոյն բովանդակ պատկերացումն էր:

Ու ժամերը կը սահէին...

Յանկարծ պարտէզին խորէն երկեղալի ու միանգամայն խորհրդաւոր շվոց մը հասաւ Սէլվինի աւկանջին:

Սէլվին վերմակը մէկիկ նետեց գոլշուրթի մը, ոտքի ելաւ ու վրանին կաշիէ շինուած դուռը բացաւ: Յետոյ մտիկ ըրաւ...

Շվոցին յաջորդած էր ոտնաձայն մը:

Սէլվին ծառերու կողմը դէպի ոտնաձայնը յառեց աչքը ու սպասեց:

Մն ատեն մարդկային երկու ստուերներ մօտեցան իրեն... մին մեր կախարդուհին էր, իսկ միւսը՝ Միւր Սխալը:

— Հրէշը քնացած է, մրմնջեց Միւր Սխալը կամայ ձայնով մը:

— Քնացած է... պատասխանեց Սէլվին: Պատրաստ էք:

— Պատրաստ ենք, չեղացին անոնք:

Երեքն ալ ներս մտան:

Մօտեցան մահճակալին, որուն մէջ կը քնանար հազարապետը: Կամացուկ մը մէկիկ նետեցին վերմակը, բացին անոր կուրծքին կէս մասը, պահ մը կեցան... մտիկ րրին ու գործի պիտան:

— Դո՛ւն՝ Սէլվին՝, գլխին կողմը կեցի՛ր որ բերանը գոցես, հրամայեց Միւր Սխալը՝ ձեռքի նշանացի ձեւով մը: Իսկ կախարդուհին ալ ոտքերուն կողմը կեցուց:

Յետոյ վրէժով մը մրմնջեց:

— Աստուած...:

Ու ձեռքին դաշոյնը հազարապետի կուրծքին ուղղեց թէ չէ, յանկարծ Սէլվին աւելի արագ կերպով զանակ մը միտեց իր արեւնը մոտող հրէշի սրտին մէջ ու բոլոր ուժովը անոր բերանը գոցելու ջանաց:

Միւր Սխալը թողուց որ Սէլվին իր վրէժը լուծէ: Միայն թէ հազարապետին իրանը բռնեց ու սպասեց:

Սէլվին չը կշտացաւ... Դանակը դուրս քաշեց ու սկսաւ հազարապետին կոկորդը կտրել:

— Բաւական է... երթա՛նք, մրմնջեց Միւր Սխալը:

Բայց Սէլվին չէր լսեր... Ա՛խ, կուղէր որ ատ հրէշին արեւնը դուրս ցայտէր եւ իր ձեռքերը թրջէր:

Վերջապէս հազարապետը փչած էր իր շունչը... արեան ճապարկը ծածկած էր մահճակալը:

Գիշերուան ժամը վեցին՝ Սէլվին, Միւր Սխալը ու կախարդուհին դուրս ելան վրանէն ու դէպի ծառաստանի կողմը յառաջացան, ուր իրենց կը սպասէին երկու զինված մարդիկ:

— Հազարապետին հոգին սեւցաւ... մրմնջեց Միւր Սխալը գլխուած երկու մարդոց:

Ու պատէն անցնելով խուճը անցաւ եղաւ:

ԱՆԿԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Առտուն, արեւը չը ծագած, հազարապետին թիկնապահը ընդ. զօրաց հրամանատարին ու Վալի փաշային դիմելով հառկցուց գործուած ոճիրը:

Բանակին հրամանատարն ու Վալին փութացին ոճիրը քննելու երթալ հազարապետին ապարանքը:

Օ՛հ, դիթէ կայծակի արագութեամբ լուրը տարածուեցաւ ամեն կողմ...:

Հայուհի մը սպաննած էր հազարապետը... ահա՛ բոլորը:

Հետեւաբար ոստիկանութիւնը բացարձակ կերպով հրաման ստացած էր ամեն տուն մտնելու, ամեն անկիւն խուզարկելու...:

(Շարունակելի)

հանք եւ անոր նմաններ թերեւս Ամե-
րիկայի մէջ կտոր կտոր ընկել նետին
շունչներու առջեւ : Չէ՞ղոքներն իսկ փա-
փաք կը յայտնեն որ եթէ կարելի է
Զիթնանի մարմինը՝ Ուստոր փոխադ-
րուի : Երմա այս խորհուրդին մէջ են :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սօֆիա տան քայնդիւս պիւտի-
րիտիկի իւզրէ, Գէօքգէնտիլ ճե-
հէթինտէ իօտօր տաղարընտա
Պուկար սինօրընա 4 թապուր
բիյատէ, 4 ալայ սիւպարի, 12
գըթա տաղ թօթու եերլէյտիրի-
միշ, վէ քէզա հուուտըն տիկէր
նօգթալարը թիւրք ասքէրի իւէ
գալիւնտիրիմիշ օլտըղընտան,
սինօր պօյուլնա հաքըն պուլուլնա
քէօյլիւ հնալի գօրգու վէ տէհէթ-
տէ գալմըշ տըր :

— Սէլանիքտէ վէ Էտիրնէտէ
էլիշէր պին ասքէր իշին թալին
հազըրլամաք իշին պապը սերաս-
քէրտէն թալիմաթ վէրիմիշ օլտըղը
մահէլինտէն պիւտիրիմիշ տիր :

— Թէքար Ենմէնտէ իլմիլալ
ու ըսեան զուհուրա կէլտիկի իւ-
վայէթ օլընթօր :

— Սէլանիքտէն իշար օլընտը
ղընա կէօրէ, Տէսիր—պէլէյ սթա-
սիօնընա եազըն՝ կէշէն կին սա-
աթ 9տա Տէրէաղաճա կիտէն
պիր թըրէնէ գարըն թէքար տի-
նամիթ աթլմըշ, Ֆաքաթ ճիւզի
պիր գարար վէրմիշ, լօթօտթիվ
պիր ազ սազաթլանմըշ, լաքին
եօլընա տէվաթ իտէպիլմիշ, Պու-
վուգուլաթ իւզէրինէ թահգիգաթ
պաշլամաշ տըր :

— Մակէթանիա գօմիթէլէրինի
գաձի իթմիշ օլան՝ Լէշօ նամ
գարիլէնին (Ճուլմաթի պալա գա-
զասընտա) մըխտարը Պուկարիա-
տան կէշմիշ օլան 80քիշլիք պիր
չէթէ թարաֆընտան տաղա սշը-
րըլարաք գաթլ իտիլմիշ տիր :
Պու վուգուլաթը Պապը Ալի Րուս
վէ Աստըրիա էլիլէրինէ իւմմէն
պիրտիրտի :

— Վերկիլերին վէ վարիտաթըն
միւսթաճէլ սուրէթտի թահսիլի
իշին Մալիյէ նազըրը հէր թա-
րաֆա էմիրլէր վէրտի :

— Սիվազ վիւլյէթինտէ հազ-
մուրլար սէպէպի իլէ՝ պախուսուս
Ամասիա գազասընտա չօգ խա-
սարաթ օլմուշ տըր :

ՏԱԽԻԼԻԹԷ

Տիւնտէն պէրու չէհրիմիլտէ
զուհուրա կէլէն շայէաթա կէօրէ,
Տէլի-Օրման թապիր օլընտն ճի-
վարտա թիւրք քէօյլիւլէրին իւ-
թիլալ գալտըրմասը իւզէրինէ՝ ա-
սալիշի իպգա իշին կիտէն պու-
կար ասքէրլէրին իքիսին տախի
թիւրքլէր վուրտուգարը սէպէպլէ՝
ասքէր աթէշէ ճիւրաթ իտուպ
թիւրքլէրտէն պիր չօգ քիշի թէ :

ԼէՖ Իթմիշ

Տիկէրլէրի մէզքիւր վուգուլաթը
չէօյլէ հիքեալէ իտէյօրլար : Տէլի
օրմանտա պիր թիւրք քէօյլիւլէտէ
Ֆաժիլալար իլէ սաքին պուլը-
նան տէսրտ պուկար գարտաշար
սապաշ թալլալ կիտուպ, էվտէն
իւմմէք պէքլէմէքտէ իտիլէր : Ե-
մէք վազթըր կէշէր, Փազաթ էվ-
տէն քիմսէ եմմէք կէթիւրմէք : Նի-
հայէթ խալը պէքլէտիքտէն սօն-
րա, գարտաշարտան պիրիսի սէ-
պէպինի ալուլաթ վէ եմմէք կէ-
թիւրմէք իշին քէօյլէ կիտէր ի-
քէն՝ եօլտա գարշըսընա չըգան
պիր թիւրքտէն ալար քի, քէօ-
յիւն թիւրքլէրի պուկար գարտաշ-
լարըն խանէսինի պասուպ, վէ գա-
տընլարը ճէպրէն գալտըրուպ, տի-
կէր պիր թիւրք խանէսինէ կէօ-
թիւրէրէք ըրլալընա կէշմէքտէ
տիրլէր : Պուկար պու վահշիլիկի
տուլար տուլմազ բիւր զապէպ օ-
լարաք, տէրհալ խանէսինէ զօշար
վէ սազլամըշ օլտըղը թիւֆէնկի
գաբուպ, թարիֆ օլընտն խանէյէ
տօղրու իլէրլէր : Խանէնին էօնիւն
տէ սիւահը պիր թազըմ թիւրք-
լէրին պէքլէտիկի կէօրմէսինտէ,
թիւֆէնկի կէօղիւնէ ալուպ,
իքի ալֆա աթէշ իտէրէք թիւրք-
լէրտէն իքիսինի վուրուր : Պու սի-
լահ սէպէրի իւզէրինէ տիկէրլէրի
տախի գօշուպ գալկալը պէօյիւ-
տիւրլէր : Եազըն պիր քէօյիւն
թիւրքլէրի տախի սիլահ պէտէսթ
Պուկարլարըն իւզէրինէ հիւճուլ
իտէրլէր : Տօպրիշէ թէլէկրաֆ վէ
րիլէր, ասքէր կէլիւր թիւրքլէր ա-
քէրէ տախի իթաաթ իթմէ-
յուպ, պուլնարտան իքի նէֆէրի
գաթլ իտէրլէր : Պուլնուլ իւզէրի
նէ ասքէր աթէշէ պաշլար վէ
մէզքիւր իքի քէօյլտէ սաղ էրքէկ
գալմալանա գատար տէվաթ ի-
տէր :

Իշիթտիկիմիզ պու գատար, Փա-
գաթ պուլֆաթիլաթըն նէ տէրէճէ
սահիհ օլտըղըն պիլէմէլիլ :

— Կէշէն կին կիլիթէրէ սի-
նօրընտան 100 նէֆէր թիւրք աս-
քէրի կէշուպ, Պուկար ասքէրլէ-
րինտէն թէրէլէնուպ՝ 20 գուրպան
լէ կէրի չէքիլմէյէ մէճպուր օլ-
տըղլարըն եազմըշ տըր :

Պու վուգուլաթտան տօլալը Ֆի-
լիպէտէ նէշր օլընտն Մուշապէնէ
նամ կազէթա չէօյլէ մալիւմաթ
վէրիյօր :

«Մահէլի մէզքիւր Ֆիլիպէյէ հա-
գըն օլմասը հաքէպի իլէ, ալտը-
ղըմը մալիւմաթա կէօրէ, իտիլիւ-
լահ իսմինտէ պիր Բօձաք չօգ
ալֆա Պուկարիայա թէզքէրէսիզ
կէշմէքտէ իմիշ, Բուսուտա պու-
լունան Պուկար ասքէրինին աթէ-
շի Բօձաղը ճանսըզ տիւշիւրմէք
լէ, վուգուլաթտան խապէրտար օ-
լան միւլաղըմ պիր միւլիւմանըն
ճէսէգինի քէֆինէմէք իշին գալ-
տըրմաք իսթմիշ իտէն՝ պուկար
ասքէրի պուլնարտա տէ թազըմ ա-
թէշ իթմէքլէ 20 նէֆէր տիւ-
շիւրմիշ տիր :

— Սօանպօլտան պիր թէլէկ-
րաֆ Պուկարիանըն մուհա-
րէպէյէ սէպէպիլէթ վէրմէսինտէն
պահա իտուպ տէյօր : «Եկէր Ֆի-
թուհաթ Պուկարիայա տախի գա-
լաճաք օլա, տիրօմաթ տաիրէ-
լէրինտէ սէօյլէնտիկի իւզրէ, նէ
քէնտիսինէ վէ նէտէ Մաքէթո-
նիայա հիշ պիր մէնֆաաթը օլմա-
լաճաք տըր :»

— Տախիլիլէ նէզարէթինտէն
կէլէն էմիր իւզրէ, աթ, գաթըր
վէ սալիւր նազլիլէ հալվանաթըն
Պուկարիաաաա իլարաճ օլընմա-
մասը վէ էճնէպիլէրէ սաթըլմա-
մասանը թէնպիհ իտէն իլաննամէ-
լէր հէր թարաֆա նէշր օլընմըշ
տըր :

— Վիւքէլա իւլիսի Մ. Բէթ-
րուվ՝ սինօրլարը մուհաֆաղա իթ-
մէք իշին սինօր պօյարընա գօվ-
վէր ասքէրիլէ թէճէմմիւ իտիլտի-
կինի, վէ Էտիրնէ վիլայէթինտէ
պուկար էհալինին հալի թէհէմ-
միւլ օլընմալաճա գ տէրէճէտէ օլ-
տըղընը վէ թիւրք հիւքիմէթինին
մէզքիւր վիլայէթտէ պուկար պը-
րազմաձաք էֆքիտար իլէ թէզի-
գաթլէ ալիլէրի հիճրէթէ մէճպուր
իթտիլինի, վէ մուհաճիրլէրին
քիւլիլիլէթ Պուկարիայա տօլմա-
սընի պուկար միլլէթինին թիւրք-
լէրէ գարշը հիտտէթ ու զալէք-
եալըղընը թէշիլիք իտէճէկինի,
վէ պու սէպէպլէ տէվլէթլէրին
տըզգաթընը ճէլպ իթմէկէնիլէթ-
լի պուլընտըղընը պիր Րուս կազէ,
թաճըյա սէօյլէմիշ տիր :

Բ Ո Ւ Ս Ի Ա

Բէթրսպուրկ կազէթալարըն
եազտըղլարընա պիւ էն, Ֆիլան-
տիա էյալէթինէ թիւնկ վէ ֆի-
շինկ կէթիւրմէք իշին եասաք
օլմուշ տըր : Քէզա աս վէ նի-
շան թալիմի մէնն օլընմըշ, Զիրա
Ֆիլանտիալը կէնճէր բաւա տէվ-
լէթինին թէզքիգաթընտան ֆէվգէ-
լատէ հիտտէթլէնուպ, ճէպրի
սուրէթտէ հուգուգարընը, թա-
նիլմաթ մաքսէտի իլէ չու սրա
սիլահ թալիմինէ վայրէթ կէօս-
թիւրմէքտէ տիրլէր :

ՍԵՐՊԻԱ

Պէլկրատ ճինալէթինտէն տօ-
լալը սթանպօլա չաղըրըլմըշ օլան
թիւրք էլիսի թէքրա, մահէլի
մէմուրիլէթինէ ապտէթ իտէրէք,
եէնի գրալը իւսմին թանրմաք ի-
շին լազըմ օլան էվրազը պէրա-
պէր կէթիւրմիշ տիր : Սուլթան
տախի պիր թէլէկրաֆլէ գրալ
Բէթրի թէպրիւր իթմիշ վէ իքի
տէվլէթ պէնինտէ տօսթլըգ տէ-
վամ իտէճէկինէ արզու պէյան
էլլէմիշ տիր :

— Չար գրալա Ս. Աննա նիշա-
նընը պիրինճի գօրտօնընը իհտա
էլլէմիշ տիր :

— Ալըմանիա էլիսի սըրպ հիւ-
քիւմէթի հազըրէսի իլէ միւնասէ :

պաթըր իւսմիլէյէ պաշլատըր :
— Գրալ Բէթլին պիր իւսքա-
ղը իլէ Սթուրչինա գաբանտըր :

ՄԻԻԹԷՆԷՎԼԻԹԷ

ԻթԱԼԻԱ հիւքիմէթինին պիր
գարաը իւզրէ, Տիրվիշանէ նամ
պիր արնալուտ կազլէթ՝ ճը՝ էշ-
խասը մուզիլէտէն առտ օլընա-
րաք, թահլէլ հըֆը Րօձաաան
Ֆրանսա սինօրընա իլարաճ օլըն-
մըշ տըր :

— Իրվիլաթի ՍՏԱՆտա թէքրա
իլմիլալ զուհուրա կէլմիշ օլուպ,
իւշ թապուր ասքէր աճէլէթէն
վաճապտինէ կէօստէրիլմիշ տիր :

— ՀՈՒՆԳԱՐԻԱՆԸՆ իսթիֆա
վէրմիշ օլան վիւքէլապընը իմքէ-
րաթօր Ֆրանց Եօգէթ հուգուրուլնա
գապուլ իտէրէք ալիլէրին սատըգ-
անէ խաճէթլէթինտէն տօլալը
պիւնը թէշէքիւր իլլէմիշ, Եէնի
վիւքէլա տախի եկմին ալնու ա-
տէթինի թճա իթմիշ տիր :

— ՍՕՄԱԹԻՆՏԷ ինկիլիզլէրին
թէլէթիլաթը չու սօն հաթթալուր-
տա չօգ օլմուշ տըր : Ճրպլի
կազիթապընը մուհալլի Սօմա-
լիտէն չէօյլէ մալիւմաթ ալմըշ
տըր, «Սօն հաթթաաա 1000 եէրլի
ինկիլիզ ասքէրի 20 զապիլէրլէ
Պիւրտօտա Մուլլաաան հապա օ-
լընտըլար : 2000 քիշինին տախի
սիւահարը ալընուպ սէրպէթ
պըրազըլտըլար, էն ասըլ ինկիլ-
թէրալը զապիլէր գաթլ օլընտը-
լար : գօմանտանըն պուրնու վէ
գուլազարընը քէստիրուպ Մուլլա
չէօյլէ սէօյլէմիշ տիր, «կիլմ սէ-
նին մէմլէթլէթինին թապիլլէրի
սէնի թէտալի իթմիլէր :»

Ճիպուլթտէն յունիս 29 թա-
րիլի պիր թէլէկրաֆ չէօյլէ պիւ-
տիրմիշ տիր : «Պէրպէրտան կէ-
շէն Սօմալիլէր՝ 2000 եէրլի տո-
քէր վէ 40 ինկիլիզ զապիլէրին
գաթլ օլընտըղլարընը թապտիգ ի-
տէյօրլար : Իւշ զապիլթ գուրթու-
լուպ Պիւրպէրալա եէթիլտիրի :

— Մ. Ալմերիկաաա պիր ճինա-
լէթ սէպէպի իլէ էհալի 3 սիեահ
գաթլ իթմիշ օլմասընտան նաշի
վիլմինկլթօն տո սիեահար սիւահ-
լանարաք պէյազար իլէ վուրուշ-
մապտալ օլուպ հիւքիմէթ ալիլ-
րի զապիլթ մուլաֆաթ օլմաաղը-
նը նիւ Եօրքտան յունիս 29 թա-
րիլի պիր թէլէկրաֆ պիւտիրիյօր :

ԹԱՏՐՈՆ «ԲԻԿԱ»

ՆԱՏԷԹՏԱ՝ հայ դերասա-
նակուն խուճը պլտի ներկայացնէ՝
1903 Յունիս 21 Եարաթ գիշեր

Ա. Ծիծաղաշարժ գլխաւ 1 ար-
Պուգրէշէ նոր հասած հայազգի
հանրածանօթ գօմիկ Հաճի

ՅԱԿՈԲԻ կողմանէ

Բ. Սմէն իղուէ զսիւազան երգ.

ՕՐ ԷԼԷՆԱՅԻ ԿՈՂԱԼԷՆ

Պարեր 10 տարեկան Րօմանուհի

ՕՐ ՔԼԻՄԱՆԹԻՆԻ Կողմէն

Գ. ԱՐԵՍՆ ԲԻԾԸ, կատակա-

խառն թատերախաղ 3 արարուած

Одговорникъ Н. Драгулевъ

Печатница Взаимность Варна.